



Արդշինբանկ

## ԱՐԴՇԻՆԲԱՆԿԻ ԵՎ ՎԻԶԱ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ «ԱՌՈՂՋ ԵՂԵՔ» ԱԿՑԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**Նպատակ՝** անկանխիկ գործարքների խթանում

**Ժամանակահատված՝** 2020թ. հունիսի 10-ից օգոստոսի 10-ը ներառյալ

**Մասնակիցներ՝** Արդշինբանկի Վիզա քարտապաններ

### Հաղթողներ՝

- **1-ին խումբ՝** Արդշինբանկի առաջին մինչև 10 (տասը) Վիզա քարտապաններ, ովքեր 2020թ. հունիսի 10-ից մինչև օգոստոսի 10-ը ներառյալ ժամանակահատվածում կկատարեն 2000 դրամ և ավել գումարով քանակային ամենաշատ անկանխիկ գործարքները:
- **2-րդ խումբ՝** Արդշինբանկի առաջին մինչև 50 (հիսուն) Վիզա քարտապաններ, ովքեր ունեն Արդշինբանկի Վիզա քարտ, բայց վերջին մեկ տարում (կամ երբևէ) չեն իրականացրել անկանխիկ գործարքներ, սակայն հայտարարված ակցիայի շրջանակում 2020թ. հունիսի 10-ից մինչև օգոստոսի 10-ն ընկած ժամանակահատվածում կկատարեն քանակային ամենաշատ անկանխիկ գնումները՝ 50,000 դրամ և ավել ծավալով:

### Մրցանակներ

#### 1-ին խմբի համար՝ 10 (տասը) մրցանակ

- Առաջին տեղ՝ 8,000,000 ՀՀ դրամ ապահովագրական գումարով առողջության ապահովագրություն մեկ տարի ժամկետով
- Հաջորդ երկու տեղ՝ 5,000,000 ՀՀ դրամ ապահովագրական գումարով առողջության ապահովագրություն մեկ տարի ժամկետով
- Հաջորդ երեք տեղ՝ 4,000,000 ՀՀ դրամ ապահովագրական գումարով առողջության ապահովագրություն մեկ տարի ժամկետով
- Հաջորդ չորս տեղ՝ 3,000,000 ՀՀ դրամ ապահովագրական գումարով առողջության ապահովագրություն մեկ տարի ժամկետով:

#### 2-րդ խմբի համար՝ 50 (հիսուն) մրցանակ

20.000 ՀՀ դրամ գումարի չափով բուժօգնությունից անվճար օգտվելու հավաստագրեր:

## ԿԱՐԵՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ

Առողջության ապահովագրությունը կարող է փոխանցվել նաև հաղթողի ընտանիքի անդամին՝ կնոջը, ամուսնուն, երեխային՝ ըստ հաղթողի հայեցողության:

Այն դեպքում, երբ հաճախորդը հաղթող է ճանաչվում միաժամանակ երկու խմբերում՝ նրա համար հասանելի է դառնում 1-ին խմբի համապատասխան տեղի ապահովագրական փաթեթը:

2 խմբի քարտապան է համարվում այն հաճախորդը, որն իրեն պատկանող որևէ քարտով վերջին մեկ տարում չի կատարել ոչ մի անկանխիկ գործարք:

ՀՀ դրամով քարտերով արտարժույթով կատարված գործարքների դեպքում հաշվարկը կատարվում է Բանկի Գործառնական օր ծրագրում տվյալ օրվա գործարքի հաշվառման փոխարժեքով: Իսկ արտարժույթով քարտերի դեպքում՝ հաշվի արժույթի նկատմամբ տվյալ օրվա ՀՀ ԿԲ փոխարժեքով:

Ակցիայի իմաստով անկանխիկ վճարումներ չեն համարվում կոմունալ վճարները, քարտից քարտ փոխանցումները, էլեկտրոնային դրամապանակների լիցքավորումը, քարտային հաշվից ներբանկային, ՀՀ կամ օտարերկրյա բանկեր միջբանկային փոխանցումները և բոլոր այն գործարքները, որոնց արդյունքում քարտապանը իրականացնում է միջոցների տեղափոխում՝ առանց իրական ապրանք կամ ծառայություն ձեռք բերելու: